

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-22/158-1

ք. Երևան

«09» 12 2022թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լ. Միրզախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գամշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Մելիքյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի N7 ՀՓՋ-ների շենքերի կապիտալ վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը

վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուին իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուին պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առավելագույն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխալային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուին պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուին չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է

վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 88 353 000 (ութսունութ միլիոն երեք հարյուր հիսուն երեք հազար) ՀՀ դրամ, որից 14 725 500 (տասնչորս միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038388
ՀՎՀՀ 00153247

Գլխավոր քարտուղար



Փրոգրամայան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գամշին» ՍՊԸ

Ք.Սևան Բաբաջանյան 1

«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150005505540100

ՀՎՀՀ 08607069

Տնօրեն՝

Գ. Մելիքյան



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ԵՐԵՎԱՆԻ N11 և թիվ 2 ՀՓՋ-Ի ՇԵՆՔԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
Քանդման աշխատանքներ					
1	Փայտյա պատուհանների քանդում պատուհանազոգերով, /հանձնում պատվիրատուին/	մ ²	16,86	1,000	16,86
2	Փայտյա դռների քանդում /հանձնում պատվիրատուին/	մ ²	30,00	2,000	60,00
3	Բետոնե հատակների քանդում, իր շերտերի հետ համատեղ	մ ³	123,68	0,200	24,74
4	Կերամիկական սալիկներից հատակի քանդում իր շերտերի հետ համատեղ	մ ²	27,30	20,000	546,00
5	Ց/ավազե հարթաշերտի քանդում	մ ²	100,44	0,100	10,04
6	Լամինատե հատակների ապամոնտաժում իր շերտերի հետ համատեղ	մ ²	91,020	23,000	2093,46
7	Պատերի վրայից հաղճասալի քանդում	մ ²	36,5	5,000	182,50
8	Պատերից գաջի սվաղի քանդում	մ ²	80,70	2,000	161,40
9	Պատերի վրայից ց/ավազե սվաղի քանդում	մ ²	66,05	0,251	16,59
10	Առաստաղներից գաջի սվաղի քանդում	մ ²	30,18	2,000	60,36
11	Առաստաղների վրայից ներկի հեռացում	մ ²	220,33	0,200	44,07
12	Կախավի պլաստմասե առաստաղների ապամոնտաժում	մ ²	8,34	140,000	1167,60
13	Պատերի վրայից ներկի հեռացում	մ ²	1053,94	0,100	105,39
14	Շին աղբի դուրս բերում, բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	234,500	0,500	117,25
Ընդամենը		19,74	%	19,50	4606,26
Շին վերանորոգման աշխատանքներ					
Բացվածքներ					
1	Առկա մետաղական դռների ներկի մաքրում	մ ²	37,332	0,500	18,67
2	Մետաղական դռների 2 շերտ յուղաներկում	մ ²	37,332	2,000	74,66
4	Պատուհան մետաղապլաստե բլոկով, սպիտակ, 60մմ հաստ, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ, բացվող	մ ²	4,32	20,000	86,40
5	Պատուհան մետաղապլաստե բլոկով, սպիտակ, 60մմ հաստ, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ, չբացվող	մ ²	12,54	10,000	125,40
6	Պլաստմասե պատուհանազոգերի տեղադրում 600մմ լայնությամբ	1մ ² բացվածք	16,86	1,000	16,86
7	Պլաստմասե պատուհանազոգ լայնությունը 600մմ արժեքը	գծմ	10,80	10,000	108,00
8	Դուռ մետաղապլաստե բլոկով, սպիտակ, ապակեպատ 60մմ հաստ, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ	մ ²	35,24	20,000	704,80
Միջնորմներ					
1	Միջնորմների շարվածք 10սմ հաստ թեթև բետոնե բլոկներով	մ ³	0,54	40,000	21,60
2	Անցքերի ցնում B7.5 դասի թեթև բետոնով	մ ³	0,14	40,000	5,40
3	Շարվածքի ամրանավորում	տն	0,0108	700,000	7,56
7	Միաձույլ ե/բ բարավորի պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	0,024	300,000	7,20
8	Ամրան Փ14A500C արժեքը	տ	0,0058	700,000	4,06
9	Ամրան Փ6A240 արժեքը	տ	0,0027	700,000	1,89
Հատակներ					
2	Խճի նախաշերտի իրականացում 15սմ հաստության ավտոտնակների հատվածում	մ ³	35,910	2,000	71,82
3	50մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ հատակների տակ	մ ²	218,450	1,500	327,68
4	Մավորակիտ սալիկներով հատակների պատրաստում	մ ²	123,98	28,000	3471,44

5	Մամլոգրանիտ սալիկներով, H= 500մմ շրիշակների իրականացում	զմ	99,00	3,300	326,70
6	Լամինատ հատակների իրականացում ներառյալ սպունգը և շրիշակը	մ²	50,30	10,000	503,00
7	Վինիլային հատակի պատրաստում նախաշերտերով, շրիշակով	մ²	38,18	2,000	76,36
8	Ավտոտնակների հատվածում B 15 դասի ամրանավորված բետոնից հատակների իրականացում 100մմ հաստությամբ	մ³	23,94	50,000	1197,05
9	Ամրանային ցանց Փ6մմ, A240 դասի ամրաններից 150x150մմ բեջջիչով	տն	0,710	500,000	355,00
Ներքին հարդարման աշխատանքներ					0,00
1	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ²	86,100	3,000	258,30
2	Պատերի լավորակ սվաղում ց/ավազով	մ²	71,83	3,000	215,49
3	Առաստաղի լավորակ գաջե սվաղ	մ²	30,180	4,000	120,72
4	Պլաստմասե կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքի պատրաստումով	մ²	236,34	5,000	1181,70
5	Պատերի երեսպատում հաղճասալով	մ²	71,83	10,000	718,30
6	Պատերի լավորակ ներկում յուղաներկով համատարած մածիկապատմամբ	մ²	94,95	1,000	94,95
7	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով համատարած մածիկապատմամբ	մ²	943,26	2,000	1886,52
8	Առաստաղների լավորակ ներկում լատեքսային ներկով համատարած մածիկապատմամբ	մ²	220,37	2,000	440,74
Ընդամենը		52,34	%	52,60	12428,27
Էլեկտրամատակարարում					
1	Առաստաղային յուստունների տեղադրում «Լեդ» տիպի յուսատուններից 15Վտ	հատ	71,00	3,000	213,00
2	Առաստաղային յուստունների տեղադրում «Լեդ» տիպի յուսատուններից 48Վտ	հատ	10,00	120,000	1200,00
3	Արտաքին յուստունների տեղադրում «Լեդ» տիպի յուսատուններից 80Վտ	հատ	2,00	40,000	80,00
4	Արտաքին յուստունների համար պահունակների պատրաստում պողպատե Փ40x3,0մմ խողովակներից	հատ	2,00	1,000	2,00
5	Թերթապողպատ 300x500x6մմ	կգ	14,2	0,500	7,10
6	Պողպատե մասերի 2շերտ յուղաներկում	մ²	1,373	1,000	1,37
7	Հեղուս M 16	հատ	8,00	0,200	1,60
8	Ավտոմատ անջատիչների տուփի տեղադրում /12տեղ/	հատ	1,00	30,000	30,00
9	Ավտոմատ անջատիչ միաֆազ 16Ա	հատ	11,00	5,000	55,00
10	Ավտոմատ անջատիչ միաֆազ 63Ա	հատ	1,00	10,000	10,00
11	BBF 3x2,5մմ2 մալուխների անցկացում	զմ	520,00	0,500	260,00
12	Անջատիչների տեղադրում մեկտեղանի	հատ	15,00	10,000	150,00
13	Անջատիչների տեղադրում երկտեղանի	հատ	6,00	10,000	60,00
14	Վարդակների տեղադրում երկտեղանի	հատ	35,00	1,500	52,50
15	BBFHR- 5x35մմ2 մալուխների անցկացում /դեպի ջեռուցման կաթսա/	զմ	45,00	0,100	4,50
Ընդամենը		9,71	%	9,00	2127,07
Ջրամատակարարման և կոյուղու ցանց					
Ապամոնտաժային աշխատանքներ					
1	Ասիական թասերի ապամոնտաժում	հատ	2,00	10,000	20,00
2	Կերամիկական լվացարանի ապամոնտաժում	հատ	1,00	200,000	200,00
Մոնտաժային աշխատանքներ					
1	Փ20մմ պոլիէթիլենային խողովակների տեղադրում սառը ջրամատակարարման համար /լվացումով և հիդրավիկ փորձարկումով/	զմ	40,00	1,000	40,00
2	Փ20մմ պոլիէթիլենային խողովակների տեղադրում տաք ջրամատակարարման համար /լվացումով և հիդրավիկ փորձարկումով/	զմ	45,00	1,000	45,00
3	Գնդախն փականների տեղադրում Փ15մմ	հատ	6,000	1,000	6,00
4	Կերամիկական լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	2,0	10,000	20,00
5	Լվացարանի ծորակ-խառնիչի տեղադրում	հատ	1,0	50,000	50,00
6	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում Փ50մմ /հիդրավիկ փորձարկումով/	զմ	15,0	2,000	30,00

7	Կոյուղու պոլիէթիլէնի խողովակների տեղադրում $\Phi 100$ մմ /հիդրավիկ փորձարկումով/	զմ	20,0	3,000	60,00
8	Հոսակների տեղադրում $d=50$ մմ	հատ	2,0	10,000	20,00
9	Ասիական թասերի տեղադրում	հատ	1,00	50,000	50,00
10	Կերամիկական զուգարանակոնքերի տեղադրում	հատ	2,0	10,000	20,00
11	Ցնցուղի տեղադրում	հատ	1,0	20,000	20,00
Ընդամենը			2,64	%	2,46
Զեռուցում					581,00
1	Գազի ջեռուցման կաթսայի տեղադրում 32կվտ	հատ	2	0,500	1,00
2	Հիդրավիկ սալքի տեղադրում $\Phi 50$ մմ	կ-տ	1,00	0,500	0,50
3	Շրջապտույտի պոմպի տեղադրում G10մ3/ժ, H=10մ	կ-տ	1	10,000	10,00
4	Բաշխիչ $\Phi 32$ մմ էլքով	կ-տ	2,00	1,000	2,00
5	Ընդարձակման բաք V=10լ	հատ	2,000	1,000	2,00
6	Չտիչ $\Phi 32$ մմ	հատ	2,00	5,000	10,00
7	$\Phi 32$ մմ մետաղապլաստ խողովակաշարի մոնտաժում /վացումով և հիդրավիկ փորձարկումով/	զմ	54,00	3,000	162,00
8	$\Phi 25$ մմ մետաղապլաստ խողովակաշարի մոնտաժում /վացումով և հիդրավիկ փորձարկումով/	զմ	73,000	3,000	219,00
9	$\Phi 15$ մմ մետաղապլաստ խողովակաշարի մոնտաժում /վացումով և հիդրավիկ փորձարկումով/	զմ	45,00	3,000	135,00
10	Մարտկոցի փական վերևի $\Phi 15$ մմ	հատ	21,00	5,000	105,00
11	Օդահեռացման փական $\Phi 15$ մմ	հատ	6,00	1,000	6,00
12	Մեկուսիչ խողովակ 42x9մմ	զմ	6,00	0,100	0,60
13	Անցքերի բացում պատերում $\Phi 50$ մմ	հատ	10,00	10,000	100,00
14	Գնդավոր փականների տեղադրում $\Phi 32$ մմ	հատ	8,00	0,500	4,00
15	Այլումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում H=500մմ /216x0,28=60,48էկմ	էկմ	60,48	4,000	241,92
16	Այլումինե ջեռուցման մարտկոցների արժեքը	սեկց.	216,00	8,000	1728,00
17	Պողպատյա խողովակներից պատյանի տեղադրում $\Phi 108$ x3մմ	զմ	6	0,100	0,60
18	Մետաղապլաստ ձևավոր մասեր	հատ	84,00	1,000	84,00
Ընդամենը			10,85	%	11,90
Ընդամենը շին.մոնտաժային աշխատանքներ			95,29	%	
Սարքավորումներ					
1	Գազի ջեռուցման կաթսա 32կվտ	հատ	2	380,000	760,00
2	Հիդրավիկ սալք $\Phi 50$ մմ	կ-տ	1,00	1,000	1,00
3	Շրջապտույտի պոմպ G10մ3/ժ, H=10մ	կ-տ	1	312,283	312,28
Ընդամենը սարքավորումներ			4,71	%	4,54
Ընդամենը շին.մոնտաժ.+սարքավորումներ			100,00	%	23627,50
ԱԱՀ			20%		4725,500
Ընդամենը					28353,000

Հ/Հ	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Շահման միավոր	Սնուցում	Ընդհանուր արժեքը միավորի համար հարգարդում	Ընդհանուր արժեքը հարգարդում
Շինարարական շխատանքներ		ՔԱՆԴԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ			
1	Մ/պլաստե հին պատուհանների ապամոնտ. և պահեստավորում 5.0 հատ	մ2	13,50	0,20	2,70
2	Աշտարակի փայտից հին պատուհանների քանդում 15.0 հատ պատուհանագոգերի հետ	մ2	5,70	0,20	1,14
3	Մետաղապլաստից հին դռների ապամոնտաժում և պահեստավորում 8.0 հատ	մ2	14,10	0,20	2,82
4	Մետաղական հին դարպասների ապամոնտաժ. և պահեստավորում 3.0 հատ	մ2	40,80	2,00	81,60
5	Փայտից 6.0 սմ հաստությամբ միջնորմների քանդում	մ2	38,40	0,20	7,68
5	Պենզալուկից 20.0 սմ հաստությամբ միջնորմների քանդում	մ3	2,74	10,00	27,40
6	Կերամիկական սալիկների քանդում պատերից	մ2	52,20	0,10	5,22
7	Պատերի կերամիկական սալիկների տակի ց/ավ սվաղի քանդում	մ2	52,20	0,10	5,22
8	Պատերի վրայից գաջի շերտի քանդում	մ2	28,20	1,00	28,20
9	Խեցե սալերի քանդում հորի պատերից	մ2	11,00	0,50	5,50
10	Խեցե սալերի քանդում հորի հատակից	մ2	4,60	0,50	2,30
10	Պատերի վրայից հին պաստառի քերում	100մ2	1,03	20,00	20,50
11	Պատերի վրայից հին ներկի քերում	100մ2	9,21	10,00	92,10
12	Շեպերի վրայից հին ներկի քերում	100մ2	1,02	10,00	10,18
13	Սյունների և հեծանների վրայից հին ներկի քերում	100մ2	1,24	10,00	12,43
14	Աստիճանների տակի և կողային հատվածների ներկի քերում	100մ2	0,25	10,00	2,45
15	Հին լամինատից հատակների քանդում	մ2	213,80	2,00	427,60
16	Հին մանրահատակի քանդում	մ2	18,30	0,20	3,66
17	Կերամիկական սալիկների քանդում հատակիներից	մ2	98,60	0,20	19,72
18	Խճանկար հատակների կացնահարում	մ2	145,10	0,20	29,02
19	Հատակների վրայից ց/ավ հարթաշերտի քանդում 30 սմ շերտով	մ3	3,90	0,10	0,39
20	Կախովի պլաստմասե առաստաղների քանդում	մ2	142,20	1,00	142,20
21	Կախովի արմսքրոնգ առաստաղների քանդում	մ2	60,50	1,00	60,50
22	Աստիճանավանդակի հին թռնածողերի և ճաղաշարերի ապամոնտաժում	գ.մ.	10,20	4,00	40,80
23	Շինարարական աղւի մաքրում, հավաքում, մարծում և/մ տեղափոխում 13 կմ	տ	52,70	5,00	263,50
	ԸՆդամենը			2,59	1294,83
100 ՄՄ ՀԱՍՏՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՆՈՐՄՆԵՐԻ ԱՄՐԱՆԱՎՈՐՈՒՄ					
24	100 մմ հաստությամբ միջնորմների կառուցում պենզալուկից 41.0 մ2	մ3	4,10	40,18	164,76
